

զիսն), ոսկեքար (սաֆայթեր), շափուղայ (ամէզիսդ) եւ կայծ (սուպի)» :26)

Դեռ 1697-ին կը վկայուի, որ «այս կողմերու (Ադրբայճանդըրիա, Եզրպոտոս) հայերը ընդհանրապէս դուրսեցրինք են... Անոնք հոն կը տանին ցամաքի ճանապարհով Հնդկաստանէն քանի մը տեսակ ապրանք, որպէս խաւրճիլ, գոհարեղէն, սուրճ եւն.» :27)

Տը Լա Մօզբէի 1710-ի ատենները Կ. Պոլսոյ մէջ կը յիշէ հայ գոհարաւաճառ մը՝ անանուն, որ իրեն Սուլթանական գոհարներու եւ արտածման գոհարաչափերուն մասին տեղեկութիւն կուտայ :28) :

Ուրիշ Անգլիացի գրող մը ԺԸ դարուն Թուրքիոյ մասին իր աշխատութեան մէջ կը վկայէ, որ Կ. Պոլսոյ «հայ ոսկերիչները մասնաւոր կերպով կը դամեն թանկագին քարերը, մասնաւորաբար ադամանդները, ինչ որ անոնց (քարերուն) առաւելութիւն մը կուտայ, կը դամեն նրբաթիթեղով, որ ղետեղուելով վարդեակներու կամ կէս-պրիաններու տակ յատկանշական կերպով գեղեցիկ կ'ըլլայ, եւ որ մթոտելու ենթակայ չէ : Իրենց կերպը այսպէս է, յակինթ մը կը կտրուի եւ խիստ կը փայլեցուի ցանկացած ձեւով, կտոր մը կապարի մէջ յակինթին չափով խոռոչ մը կը պատրաստուի եւ խոռոչին վրայ կը ղետեղուի թիթեղիկ մը փաթաթելու զօրաւոր թուղթի մը հաստութեամբ, եւ լաւ մը կը յղկուի : Յետոյ յակինթը թիթեղիկին վրայ կը ղետեղուի, որ իր կարգին խոռոչին վրայ կ'ըլլայ, եւ փայտամուրճով մը կը հարուածուի (յակինթը խոռոչին մէջ մխրճելով եւ թիթեղիկին ցանկացուած ձեւը տրուելով՝ (Յ. Ք.) : Գեղե-

ցիկ փայլը, որ թիթեղիկը կը ստանայ, հազիւ կարելի է երեւակայել : Ասիկա ընդհանրապէս դարձնի կը պահուի, եւ ասոր նման թիթեղիկներ կը ծախուին կէս կամ երեք չորրորդ տոլլարի իւրաքանչիւրը :

«Ոսկերիչները, որոնք զլիսաւորաբար հայեր են, հետաքրքրական կերպ մը ունին ժամացոյցի կափարիչներ եւ ատոնց նման իրեր զարդարելու ադամանդներով եւ ուրիշ քարերով, պարզապէս զանոնք անոնց վրայ փակցընելով» :29)

Գրողը կը շարունակէ փակցուելու կերպի եւ խէժի մասին մանրամասնութիւններ տալ, որոնք հոս կրկնել աւելորդ կը սեպեմ :

Մինչեւ ԺԹ դարու սկիզբը հայեր Պարսկաստանի մէջ զբաղած են գոհարաւաճառութեամբ : Բիէր-Ամէտէ Ժօպէր Ֆրանսացին կը վկայէ, որ 1806 յունիս 5-ին Թեհրան կը մըտնար «ընկերակցութեամբ Սպահանցի եւ Պաղտատցի գոհարեղէնի հարուստ վաճառականներին» :30)

Բնականաբար, սպառիչ աշխատութիւն մը չէ որ կուտամ հոս : Նիւթը հարուստ է շատ մանրամասնութիւններով, որոնք ժամանակի ընթացքին միայն պէտք է ամփոփուին՝ օր մը հայ վաճառականութեան ընդարձակ պատմութեան մէկ կարեւոր գլուխը կազմելու համար :

Գոհարագիտութեան համար մեր հին եւ հնագոյն մատենագրական պատմութեան մէջ շատ խոշոր նիւթ կայ՝ արժանի լուրջ եւ մանրակրկիտ ուսումնասիրութեան : Ես զգուշացայ հոն մխրճուելէ՝ նկատի առնելով գործին ընդարձակ ծաւալը :

(Վ Ե Ր Զ)

26) Philosophical and Political History of the Settlements and Trade of the Europeans in the East and West Indies.— London, 1798, Vol. I.

27) Travels... London, 1723:

28) Անդ՝ էջ 149, Բ. հատոր :

29) A Survey of the Turkish Empire.— by W. Eton, London, 1799, p. 233:

30) «Ուղեգրութիւններ».— Թարգմ. Յով. Յակոբեան, Երեւան, Պետհրատ, 1934, Զ. հատոր, էջ 228: